

ԵՂՎԱՐԴ ԳՈԼԱՆՑՑԱՆ

Կ Ա Ր Մ Ի Ր Գ Ի Շ Ե Ր Ն Ե Ր Ը

— Տրապիկո՞ն, ի՞նչպես է ջարդին գիշերը:
 — Գիշերն է բարախուն ու գեռուն արյունով.
 Ալիքներ կապտակեն սարահարթը դաժան
 Ու հետ-հետ կը փսխեն մանուկներ ծյուն շուշան.
 Սև հեղուկ Անեղոյ հառաջում է գինով,
 Մանուկներ, որ մորկանց ծիծերն իսկ չտեսան:

— Կարն Դաշտ, ի՞նչպես է ջարդին գիշերը:
 — Գիշերն է գերեզման թանձր ամառով բուերու:
 Մանգաներ ժանգոտած կը սպասեն անհարիր...
 Անոնք ա'լ ճահի՛կն են ու գետինն է ոճի՛ր,
 Ու ծով-ծով ցորեններ կը փսխան իրարու
 Աղետքեն վանկ մ'երկար, որ բնավ չավարտիր...:

— Երսկա՛, ինչպես է ջարդին գիշերը:
 — Գիշերը վերջ չունի ու լեռներն են հալեր.
 Նշովլ մ' իսկ չկա, որ անդունիս տա երակ:
 Չե՞ք լսեր ընդհողյա խով ծայն մը, շա՛տ բարակ.
 Հոս թաղված են ողջ-ողջ չորս հարյուր
 մանուկներ,
 Չե՞ք լսեր բարախունն հորերուս անհատակ:

— Բեմա՛ն, ի՞նչպես է ջարդին գիշերը:
 — Գիշերն է վրեժի խորագիծ վերտառում,
 Մարմարե սյուներով ծառացող որ կայիի:
 Տաճարին մեջ բանտված քա ղցն է, որ կը փրփրի,
 Աստվածն է, որ կուզա իր տունին մեջ տրտում:
 Բնավ հացի չփոխվող յարմարն է տաճարի:

Մո՛ւ, ի՞նչպես է ջարդին գիշերը:
 — Գիշերն է բոցավառ ամիամար խարուկով,
 Ուր մեռելն իսկ կրնա քրտնիլ հողին տակ...
 Փողոցներ լարնարաց կլավիներն են անհագ,
 Լափելով ջինջ կուլսերն ու կիները թոթով:
 Գիշերը Մողոր մ'է բոց գիրկով մ'անհատակ:
 — Սերաստիա՛, ի՞նչպես է ջարդին գիշերը:
 — Գիշերն է արյունի շատրվան անպատո՞ւմ,


Հարության սուրբ տոնին՝ զանգակն է լուռ
 խապա,
 Բայց ինչո՞ւ բավուն մը կը մսա դեռ անձառո...
 Մոոցե՞ր է անդորրն իսկ՝ գերեզմանը տրտում.
 Շիրիմներ կը տանին, Աստված ա'լ չունի բառո...:

— Շապին-Գարաբիսա՛ր, ի՞նչպես է ջարդին
 գիշերը:
 — Գիշերն է գնդակի անսպառ հրանձրեն,
 Կայծերու, սուրերու անտառ մը միշտ կանգուն.
 Գիշերն է աղամանն քրտինքը հուսկ հայուն,
 Որ փրփրած կիմա վար ու նորե՞ն զայրան
 Կը կանգնի, ճանկերուն մեջ առած հողն անհուն:

— Գաղատիա՛, ի՞նչպես է ջարդին գիշերը:
 — Գիշերն է լայնալիճ արև մը արյունե,
 Ու վարեր մայիսան, արյունով շեկ կրկի՞ն,
 Արյունին բուրումեն հաղթված՝ կը ծնգին,
 Գիշերը խայտացնու խայտերն է, մարի՞կն է,
 Բոսոր վիրն է, հունձքն է գանկերուն ու Մտքին:

— Կեսարիա՛, ի՞նչպես է ջարդին գիշերը:
 — Գիշերը կախաղան-անտառն է, մարդ-
 բուրվա՞ն,
 Զահերու պես կախվող գլուխներու Պանթեո՞ն,
 Հոնդունն է Աստուծո, սարսափի մօայլ տոն,
 Զգործված ոճիրին քավությունն է անձառ.
 Գանգերով թավալվող լուս Համրիչն է, Սերն՝
 Բոն:

— Եփրա՛տ, Տիգրի՞ս, Արածանի՛, ի՞նչպես է
 շարդին գիշերը:
 — Գիշերն է թափանցիկ՝ արյունի կորակով:
 Ուրիները կաճին ծովսերու պես խունկի...
 Գիշերը ծողփուն է սրտերուն վերտգի...
 Պալիխն է, որ մեր մեջ շանթակեկ կընկլուվի:



Մեծ Եղեռնի նահատակների հիշատակին

(Նկարիչ՝ Մ. Ջեպապելյան)

— Դեր-Ձո՞ր, ի՞նչպես է ջարդին գիշերը:
 — Գիշերը բոցանուտ ավազն է անսահման,
 Կափկափումն է քաղցին ատամանց ծռած ի հող.
 Ծարավն է փրփրուն, խոր կլափն է անցող,
 Բոմբայի պայթյունով՝ ավերքի օվկիա՞ն.
 Գիշերը Մայր մըն է ծեռնունայն միշտ քալող:

— Անապատնե՞ր, ի՞նչպես է ջարդին գիշերը:
 — Գիշերն է միությունն երկինքին և խիճին,
 Բորենվույն ու մարդուն, գանգին ու Աստուծու,
 Քալողին ու ոսկերց որ հանգչած են բրածո:
 Գիշերն հայ Զրիստոսն է լացող մեծ Անուրջին,
 Աշխարհին Քավությունն, որ կըսե. «Տէ՞ր,
 անցո՞...»:

**

Ո՞վ կարմիր գիշերներ, ինչպես դուք ա՞լ լուսցաք.
 Ի՞նչ մեծ սեր մը պետք էր լուսցնելու համար
 ծեպ.

Սափորնե՞ր սարսափի, անհատակ, փրփրադեգ,
 Ի՞նչպես դուք թափվելով՝ ձեր հալած ժամիրը
 տաք

Զկրցավ ջնջել բնավ Հայությունն ողջակեզ:

Զանգակներն հալեցան, բայց աղոթքն է

բպուն...
 Օրորցներն ինկան, այլ կապրի միշտ Ցավորդին,
 Կույսերը մեռան, այլ զարկը մնաց Հայ Սրտին,
 Խարույներ մոխրացան, այլ անոնց բոցն
 անհուն,

Լո՞ւս տվավ Աշխարհին և աչք մ' ալ
 Անդունդին...:

Կ. Պոլիս, 1918:

(«Խաչված քաղաքներու ծալնը» այս
 անտիպ ժողովածուից) (Յ)

